ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մեկսիկական ծոցում, 2010թ. ապրիլի 20-ին, նավթային հորատման հարթակում տեղի ունեցավ հզոր պայթյուն և հրդեհ, շարքից դուրս եկավ հորատման ողջ համակարգը և Երկրի ընդերքից, մեծ ճնշման տակ սկսեց արտահոսել նավթը: Հորատանցքը արագ փակել չհաջողվեց, քանի որ այն ծովի հատակի 1500 մետր խորության վրա էր: Վթարը և նավթի հոսքը հաջողվեց կասեցնել միայն վթարից 152 օր հետո: Մեքսիկական ծոցում հայտնվեց 75 հազար քառ.կմ մակերեսով նավթով աղտոտված տարածք: Մի քանի ամիսներ անց նավթային աղտոտված տարածքը հասավ հսկայական չափերի և հայտնվեց սկզբում Գալֆստրիմ, այնուհետև Հյուսիսատլանտյան ծովային հոսանքների ջրերում: Ինչպես ցույց տվեցին հետագա արբանյակային նկարահանումները, այդ աղտոտված ջրերի հետքերը հայտնաբերվեցին նույնիսկ Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասերում, Նորվեգական ծովում, անգամ՝ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի արևմտյան մասում, սպառնալով լողացող սառույցների՝ այսբերգների աղտոտմանը: